

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՐԱՐԱՏԸ



# 207, Հունվար 2016 թ. No 207, January 2016 شماره ۲۰۷ بهمن ماه ۱۳۹۴


# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստան.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....8
- 4- Սփյուռք.....11
- 5- Գծանկարչություն.....15
- 6- Առածանի.....15

## Պարսկերեն բաժին

Հայ գրականություն և մշակույթ.....1-2



**Ճապիկի առաջին էջում՝** Առեղծվային Արարատը  
**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրերը

Համար 207, Հունվար 2016  
No. 207, January 2016

ماهنامه لویس - شماره ۲۰۷ بهمن ماه ۱۳۹۴

# ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

**Խմբագրական կազմ՝**

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան  
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

**Փոստարկը 15875-9488 Թեիրան - Իրան**

Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

## LOUYS

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

**Թերթի Գինը՝** Հատարվածառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին  
պարտադիր է:

# Սփյուռքի դաշնակցականների մի մասը պահանջում է Հրանտ Մարգարյանի հրաժարականը, մյուսները հրաժարվում են Դաշնակցությունից



ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայագույցի Հրանտ Մարգարյանի հայտարարությունը կռապիզա մտնելու մասին պարզվում է՝ համաձայնեցված չի եղել սփյուռքի կուսակցական կառույցների հետ: Սփյուռքի ՀՅԴ որոշ ղեկավար անդամներ նույնիսկ անակրնկալի են եկել այդ հայտարարությունից և հիմա այդ կուսակցության ներսում հասունանում է նոր բողոքի այիք՝ ղնդդեմ Հրանտ Մարգարյանի: Ծատ դաշնակցականներ պահանջում են, որ Մարգարյանը հրաժարական տա, իսկ սփյուռքի դաշնակցական կառույցների այլ ազդեցիկ ներկայագույցիներ էլ համարում են, որ Մարգարյանը այնպես է ուզուրպագրել կուսակցության կառույցը, որ նրա հրաժարականին հասնել հնարավոր չէ: Այդպիսիք ղնդհանրապես գերադասում են ի նշան բողոքի դուրս գալ կուսակցությունից: Քանի որ սփյուռքում շատերը կուսակցական են ղնտանիքներով և նույնիսկ գերդաստաններով, ապա դաշնակցությունից հրաժարումը կրում է տոտալ բնույթ: Միայն ՀՅԴ Բյուրոյի մի քանի անդամներ են, որ փորձում են պաշտպանել կուսակցության ղեկավարի դիրքորոշումը: Նրանց քարոզչության հիմնական թեման այն է, որ Հայաստանն այսօր գտնվում է այնպիսի ծայրահեղ ծանր վիճակում, որ Դաշնակցությունը՝ որպես երկրի ճակատագրով մտահոգ ուժ, հրավումը չունի կողքի կանգնել և դիտորդի դերում գտնվել, որ հրենք պետք է ակտիվորեն մասնակցեն Հայաստանը այս ծանր վիճակից դուրս բերելու գործին: Սփյուռքի ղեկերների յոթանուն քարոզչական աշխատանք տանելու նպատակով ԱՄՆ է գործուղվել նաև ՀՅԴ համբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը: Վերջինս սփյուռքի դաշնակցների առաջ յայտահառաջ ելույթներ է ունեցել այն մասին, որ Դաշնակցությունն ամեն ինչ արեց իշխանությունը որսից՝ փողոզից փոխելու համար, բայց դա ստացվեց, հիմա պետք է փորձել իշխանափոխություն անել ներսից: Ըստ մեր աղբյուրների՝ Արմեն Ռուստամյանի առաքելությունը ևս ձախողվել է, որովհետև ինչ էլ ուզում ես ասա, սակայն սփյուռքի դաշնակցականներն էլ առաջվա «ոխտեր չեն, որ սկանդներին ինչ յապա ուզես՝ կխսես»: Այնտեղ էլ են հասկանում, որ կռապիզայի մաս կազմելու դեպքում ոչ թե Դաշնակցությունն է փոխելու իշխանությունը, այլ իշխանությունը՝ Դաշնակցությանը: Դրա վառ օրինակը սփյուռքի դաշնակցականներն ունեն, քանի որ Դաշնակցությունը երևու անգամ մաս է կազմել կռապիզային, և դրա արդյունքը եղել է միայն այն, որ որոշ դաշնակցականներ դարձել են ղնդհատակյա միլիտանտներ, իսկ նրանց ղեկավարած նախարարություններում Վերահսկիչ պալատի հայտնաբերած յուրազույմներից բազ է մնացել անգամ հանրապետական նախարարների բերանը: Բայց ինչպես նշել ենք, ՀՅԴ-ի համար կռապիզա մտնելն այդուհանդերձ չունի: ՀՅԴ-ն ոչ թե գրոյակն, այլ դրանից էլ գաժը վարկանիչ ունի և եթե առաջիկա ղնդություններում դա արձանագրվի, ապա դա կփաստի, թե իրականում ինչպիսի ղեկավար է ՀՅԴ-ի համար Հրանտ Մարգարյանը, և ինչպես է հայ հանրությունը գնահատում նրա ղեկավարած կուսակցության գործունեությունը: Այնպես որ, եթե նույնիսկ բողոք դաշնակցականներն էլ դուրս գան կուսակցությունից, միևնույն է՝ Հրանտ Մարգարյանը ստիպված է յինելու ՀՅԴ-ն մտցնել կռապիզա: Այդպես նա կոնչսագնի կուսակցությունը, բայց կշարունակի արտահայտել իր փորձաթիվ կողմնակիցների յահերը: Ի դեպ, հայ ժողովուրդը Հրանտ Մարգարյանի գործունեությունից միայն պետք է գոհ յինի և ողորունի նրա գործունեությունը կուսակցության ղեկավարի պաշտոնում, որովհետև Մարգարյանը գուզադրելով ՀՅԴ-ի իրական դեմքը, արագացրեց այդ կուսակցության արդեն 127 տարի տևող վախճանը:

## Հայաստանի Հանրապետություն

### Լեռնային Ղարաբաղում գրանցվել է օտարերկրյա մասնակցությամբ ավելի քան 160 ընկերություն



Կայուն ներքաղաքական իրավիճակը եւ արմատական հարկային բարեփոխումները Լեռնային Ղարաբաղն ավելի հրապուրիչ են դարձրել արտասահմանցի ներդրողների համար: Այս մասին հայտնել է Լեռնային Ղարաբաղի հանրապետության էկոնոմիկայի նախարար Անդրանիկ Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ միջինում ներգրավված ներդրումների ծավալը կազմում է ընդհանուր ներդրումների 10 տոկոսը: Գրանցված է արտասահմանյան մասնակցություն ունեցող 160 ընկերություն: «Որպես արտասահմանյան կապիտալի ներդրման ոլորտ՝ կարելի է առանձնացնել արդյունաբերությունն ու հեռահաղորդակցման ոլորտը: Ընդ որում, եթե տնտեսության կայացման սկզբնական փուլում օտարերկրյա ներդրողները շուկա էին մտնում որպես նոր ընկերությունների հիմնադիրներ, ապա վերջին ժամանակներս նկատվում է համատեղ ձեռնարկություններ ստեղծելու միտում: Օտարերկրյա ներդրումները ներառվում են արդեն գործող տեղական ընկերությունների ընդլայնման համար», - ասել է նախարարը:

### Վերջին 10 տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղում կառուցվել է 13 ՀԷԿ



Վերջին 10 տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղում կառուցվել է 13 ՀԷԿ: Այս մասին ասել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Անդրանիկ Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ դա թույլ է տվել մեծացնել էլեկտրաէներգիայի ծավալները ավելի քան 6 անգամ եւ դուրս գալ էլեկտրաէներգիայի ոլորտում ինքնաբավ մակարդակի:

Այսօրվա դրությամբ էներգետիկայի ոլորտում աշխատում է ավելի քան 2000 մարդ:

«Տնտեսության նոր ուղղություններից մեկը լեռնահանքային արդյունաբերությունն է: Լինելով առավել երիտասարդ ճյուղ՝ այն դարձել է պետական բյուջե հարկային վճարումների խոշորագույն աղբյուրը եւ 1500 աշխատատեղ է ապահովել», - ասել է նախարարը:

### ԼՂՀ-ին նվիրված փակ քննարկում ԱՄՆ Կոնգրեսում. բռնությունը հասել է գագաթնակետին



ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հունվարի 6-ին փակ քննարկում է կազմակերպել՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը:

Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի կայքը տեղեկացնում է, որ հանդիպմանը մասնակցել են հանձնաժողովի անդամներ, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորիքը:

Հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսն ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային կոչ է արել միանալ իրենց եւ հորդորել ԼՂՀ հարցը լուծել խաղաղ ճանապարհով:

«Լեռնային Ղարաբաղում բռնությունը հասել է գագաթնակետին: Ընդամենը մեկ ամիս առաջ մենք լսեցինք, որ Ադրբեջանը կիրառում է ծանր զրահատեխնիկա՝ կոպտորեն խախտելով հրադադարի ռեժիմը: Ինչպես Ուորիքն է ասել, սա սառեցված հակամարտություն չէ, այլ մոռացված հակամարտություն է, որը կարող է դուրս գալ վերահսկողությունից: Այդ պատճառով մենք առաջարկում ենք հեռացնել դիպլոկահարներին առաջնագծից: Պետք է նաեւ հատուկ մենախիզմներ ներդնել: Սա պետք է արվի հնարավորինս արագ, որպեսզի վերջ դրվեն սպանություններին եւ պատերազմական գործողություններին», - ասել է Էդ Ռոյսը:

Նշենք, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսը եւ հանձնաժողովի անդամ Էլիոթ Բեյզելը դեռեւս 2015 թվականի աշնանը նամակով ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորիքին կոչ էին արել Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում ցուցաբերված կեղծ հավասարության ձախողված քաղաքականությունը փոխելու կառուցողական, հաշվետվողականության վրա հիմնված մոտեցմամբ: Փակ քննարկման մասին հայտնի էր դարձել դեկտեմբերի կեսերին:

## Բյուրականի աստղադիտարանը տարիներ անց կարողացել է վերագործարկել 2 մեծ դիտակները



Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում 2015-թ-ի ընթացքում հայտնաբերվել են նոր տիրույթներ, որտեղ աստղերը երիտասարդ են կամ նոր են առաջանում: Այս մասին ասաց աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը՝ ամփոփելով նախորդ տարվա կատարած աշխատանքը:

«Մեր աստղադիտարանում կատարվել են հետազոտություններ աստղառաջացման նոր տիրույթների հայտնաբերման ուղղությամբ, այսինքն այն տեղերը, որտեղ աստղերը դեռ շատ երիտասարդ են կամ նոր են առաջանում: Այս աստղերից մեծ քանակությամբ շիթեր են առաջանում, որը շատ կարելու է հասկանալու համար, թե ինչ ուղղությամբ է գնում զարգացումը: Չարգացման ճանապարհը հասկանալու համար մենք նաև անկայուն աստղերն են ուսումնասիրել, որոնք բռնկվում են, փոփոխվում են», - ասաց Հայկ Հարությունյանը:

Աստղադիտարանի կարելուրագույն ձեռքբերումը, ըստ Հարությունյանի, երկու մեծ դիտակների վերանորոգումն ու արդիականացումն է, որովհետև երկար տարիներ ցանկություն կար՝ դրանք վերաշահագործելու, սակայն ֆինանսական միջոցները չէին հերիքում:

«Նախորդ տարի Բյուրականի աստղադիտարանում բացվեց նաև Տարածաշրջանային աստղագիտական կենտրոնի գրասենյակը, ինչը կարելու է աստղադիտարանի միջազգային ճանաչման համար: Այս պահին կենտրոնին միացել են Իրանը, Հայաստանը, Վրաստանը: Պատմության մեջ առաջին անգամ մենք բանակցություններ ենք սկսել եվրոպական աստղադիտարանների հետ՝ միավորվելու կամ նրանց հետ համատեղ ծրագրեր իրականացնելու համար», - նշեց Հայկ Հարությունյանը:

Ինչ վերաբերում է այցելուներին, նախորդ տարում ավելի քան 70 գիտնական է այցելել աստղադիտարան՝ գիտաժողովների մասնակցելու կամ այնտեղից ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

«Այցելուների թիվն էլ մի քանի հազարի է հասնում: Մարդիկ խմբերով գալիս են փոքր դիտակից դիտումներ անելու համար», - հավելեց աստղադիտարանի տնօրենը:

## Հարցում. Ադրբեջանցիների 25 տոկոսից քիչն է ԼՂ հակամարտությունը արդիական թեմա համարում

Ադրբեջանական minval.az կայքում հերթական հարցումն է իրականացվել. այս անգամ ընթերցողներին առաջարկվել է պատասխանել հարցին՝ «Ադրբեջանի մասշտաբներում ո՞ր խնդիրներն եք համարում առավել արդիական»:

«Տնտեսություն» պատասխանն ընտրել է հարցվածների 27 տոկոսը (404 մարդ): Ղարաբաղյան հակամարտությունը ամենաարդիական թեման է համարել հարցվածների 23 տոկոսը (359 մարդ): Բարձր գնահը նշել է 18 տոկոսը (267 մարդ), «գործազրկությունը»՝ 11 տոկոսը (158 մարդ):



Մանաթի արժեզրկումը թիվ մեկ խնդիր է համարել 143 մարդ (10 տոկոս): Հանցավորությունը մտահոգել է հարցմանը մասնակցածների 6 տոկոսին (83 մարդ), արտաքին քաղաքականությունը՝ 3 տոկոսին (49 մարդ): Հարցմանը մասնակցել է 1494 մարդ:

## Անցկացվել են հայ-բրիտանական երկրորդ ռազմաքաղաքական խորհրդակցությունները



Հայաստանի Հանրապետության և Միացյալ Թագավորության պաշտպանության նախարարությունների միջև պաշտպանական բնագավառում համագործակցության շրջանակներում Լոնդոնում հունվարի 14-ին անցկացվել են հայ-բրիտանական երկրորդ ռազմաքաղաքական խորհրդակցությունները, որին հայկական կողմից մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի գլխավորած պատվիրակությունը:

Խորհրդակցությունների ընթացքում ամփոփվել են 2015թ. երկկողմ համագործակցության արդյունքները և քննարկվել են հայ-բրիտանական պաշտպանական բնագավառում 2016-2017թ.թ. համագործակցության հեռանկարները: Քննարկումների արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալը և քննարկումների մասնակցող բրիտանական պատվիրակության ղեկավար, Միացյալ Թագավորության միջազգային անվտանգային քաղաքականության տնօրեն Սիք Գրրը (Director International Security Policy, Mr. Nick Gurr) ստորագրել են Հայաստանի Հանրապետության և Միացյալ Թագավորություն պաշտպանության նախարարությունների միջև պաշտպանական բնագավառում 2016-2017

թվականների համագործակցության պլանը: Այն ընդգրկում է համագործակցության մտտ երկու տասնյակ ուղղություններ, որոնք հիմնականում առնչվում են ռազմական կրթությանը եւ վերապատրաստմանը, տարբեր ոլորտներում փորձի փոխանակմանը եւ այլն: ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո նախատեսվող ՀՀ պաշտպանությանը եւ անվտանգությանը վերաբերող օրենսդրության վերանայման նպատակով, հաշվի առնելով վերոնշյալ ոլորտներում Մեծ Բրիտանիայի խորհրդարանական կառավարման մեծ փորձը՝ համագործակցության պլանով նախատեսվում է խորհրդատվական աջակցություն:


Ռազմաքաղաքական խորհրդակցությունների ամփոփումը իրականացվել է Միացյալ Թագավորության պաշտպանության նախարարության պահեստազորի եւ միջազգային պաշտպանական համագործակցության հարցերով պետական նախարար պարոն Ջուլիան Բրեյզերի (UK Minister of State for Reserves also responsible for International Defence Cooperation Mr. Julian Brazier) հետ հանդիպման ընթացքում:

Նույն օրը տեղի է ունեցել ՀՀ ՊՆ պատվիրակության հանդիպումը ՄԹ ԱԳՆ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով դիրեկտորատի տնօրեն Մայքլ Թաթամի (Head of Eastern Europe & Central Asia Directorate, Foreign and Commonwealth Office Mr. Michael Tatham) հետ: Զննարկվել են երկկողմ պաշտպանական համագործակցությանը, միջազգային եւ տարածաշրջանային անվտանգությանը, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող հարցեր: Մասնավորապես՝ ներկայացվել է զինված դիմակայության իրավիճակը:

Այսօր՝ հունվարի 15-ին, Միացյալ Թագավորության խորհրդարանում նախատեսվում է հանդիպում ՄԹ խորհրդարանի բոլորը կուսակցությունները ներկայացնող Հայաստանի հետ բարեկամության խորհրդարանական խմբի նախագահ, ՄԹ խորհրդարանի անդամ Ստեֆան Փաունդի (Mr. Stephen Pound, MP, Chair, Armenia All-Party Parliamentary Group) հետ:

Պատվիրակության աշխատանքներին իր մասնակցությունն է բերել ՄԹ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանության դեսպանորդ Արմեն Լիոյանը:

## Կյանքից հեռացել է ՀՀ վաստակավոր արտիստ Գեորգ Չեպչյանը



Կյանքից հեռացել է ՀՀ վաստակավոր արտիստ Գեորգ Չեպչյանը:

Գեորգ Չեպչյանը ծնվել է 1927 թվականի դեկտեմբերի 10-ին, Դոնի Ռոստով քաղաքում: 1948 թվականին ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի

Վարդան Աճեմյանի դեկավարած կուրսը: 1948 թվականին աշխատել է Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում, այնուհետեւ՝ Պատանի հանդիսատեսի թատրոնում: 1954 թվականից մինչ օրս աշխատել է Գ. Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում:

1971 թվականին արժանացել է ՀՍՍՀ վաստակավոր արտիստի կոչման: Հեղինակ է Վարդան Աճեմյանին նվիրված երկու գրքի: Դասավանդել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժնում: Հանդես է եկել բազմաթիվ դերերով՝ հայ թատրոնի տարբեր բեմերում, նկարահանվել բազմաթիվ ֆիլմերում:

## Ամատունի Վիրաբյան. ՌԳ պետական արխիվի հետ համատեղ կիրապարակի «Կովկասյան ճակատը 1914-1918թթ.» ժողովածուն



Հայաստանի ազգային արխիվը Ռուսաստանի պետական արխիվի հետ համատեղ կիրապարակի «Կովկասյան ճակատը 1914-1918թթ.» ժողովածուն, որը նյութեր է պարունակելու նաեւ Հայոց ցեղասպանության մասին: Այս մասին հունվարի 13-ին կայացած մամուլի ասուլիսին ասել է ՀՀ ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը:

Նրա խոսքով՝ Ազգային արխիվը ավանդաբար շարունակում է համագործակցել այն երկրների հետ, որտեղ Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին շատ նյութեր կան. առաջին հերթին՝ Վրաստանը, Ռուսաստանը եւ Իրանը: «Ֆրանսիայի հետ մենք իրականացնում ենք դեռեւս անցյալ տարի մեկնարկած ծրագիրը, որը շարունակվելու է մինչեւ 2018թ.: Ծրագիրը նվիրված է հայ-ֆրանսիական հարաբերություններին, Առաջին համաշխարհային պատերազմում ֆրանսիական բանակի կազմում հայերի մասնակցությանը եւ դեպի Ֆրանսիա հայերի գաղթին», - նշել է Ամատունի Վիրաբյանը՝ հավելելով, որ իրենք համագործակցում են Ռուսիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի եւ Լեհաստանի արխիվների հետ:

## Սպիտակ տունը պետք է պատասխանի Արցախի վերաբերյալ տասը հիմնական հարցերի. Հարութ Սասունյան

Երկար տարիներ ի վեր ամերիկահայ համայնքը դժգոհ է Արցախի վերաբերյալ Միացյալ Նահանգների քաղաքականությունից: Այս մասին իր հոդվածում գրում է «Կալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը՝ հավելելով, որ Սպիտակ տունը պետք է պատասխանի Արցախի վերաբերյալ տասը հիմնական հարցերի:

Նա, մասնավորապես, գրում է.

«Ամեն անգամ, երբ Ադրբեջանը կրակ է բացել Հայաստանի եւ Արցախի վրա, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ջեյմս Ուորիքը եւ նրա նախորդները, թաքնվելով չեզոքության քողի տակ, մեղքը բարդել են հակամարտության երկու կողմերի վրա: Նման անարդար մոտեցումը խրախուսել է Ալիեիին ավելի սաստկացնելու իր հարձակումները:



Նման արյունալի հարձակումները վերացնելու կամ գոնե նվազագույնի հասցնելու համար, Կոնգրեսի 85 անդամներ վերջերս համատեղ նամակ ստորագրեցին, կոչ անելով Օբամայի վարչակազմին իրականացնել հետեւյալ երեք քայլերը երկու երկրների միջեւ սահմանի վերաբերյալ. նախ՝ դուրս բերել դիպլոմատներին, երկրորդ՝ ավելացնել միջազգային մոնիտորների թիվը, եւ երրորդ՝ տեղադրել կրակոցների ուղղությունը ճշտող սարքավորումներ: Չարմանալի չէ, որ Ադրբեջանը մերժել է բոլոր երեք առաջարկները, իսկ Հայաստանը, Արցախը եւ Մինսկի խմբի միջնորդները (Ֆրանսիա, Ռուսաստան եւ Միացյալ Նահանգներ) ընդունել են դրանք:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսն անցյալ շաբաթ դռնփակ ճեպագրույց ունեցավ դեսպան Ուորիքի հետ, իր եւ կոնգրեսական Էլիոթ Էնգելի կողմից նախաձեռնած առաջարկների իրականացման կապակցությամբ: Մինչեւ այդ դռնփակ հանդիպման կայացումը, Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը տարածել էր տասը հարցեր դեսպան Ուորիքի համար: Քանի որ հայտնի չէ՝ այդ հարցերը բարձրացվել են կոնգրեսական ճեպագրույցի ընթացքում, թե ոչ, ապա պետք է խնդրել Օբամայի վարչակազմին հրապարակավ արձագանքել այդ տասը հարցերին, որպեսզի բոլորը տեղյակ լինեն Արցախյան հակամարտության վերաբերյալ նրա դիրքորոշմանը:

Պաշտոնական պատասխանի ստացումն ապահովելու համար եւ առաջարկում են այս հարցերը տեղադրել Մայիտակ տան կայքէջի «Առաջարկություններ» բաժնում: Կայքում նշված է, որ Օբամայի վարչակազմը 60 օրվա ընթացքում հանդես կգա պաշտոնական պատասխանով ցանկացած առաջարկության վերաբերյալ, որը տեղադրվելուց հետո 30 օրվա ընթացքում կհավաքի 100 հազարից ավելի ստորագրություն: Ադրբեջանցիներն արդեն օգտվել են այս բացառիկ հնարավորությունից՝ Մայիտակ տան կայքում տեղադրելով երկու հակահայկական առաջարկության, որոնք համապատասխանաբար հավաքել են 105686 եւ 126828 ստորագրություն: Ինչպես եւ սպասվում էր, Մայիտակ տունը հանդես է եկել հայտարարությամբ ի պատասխան ադրբեջանական երկու առաջարկությունների: Ստորեւ ներկայացված են Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի տասը հարցերը, որոնք որպես

առաջարկություն պետք է տեղադրել Մայիտակ տան կայքէջում.

1) Ի՞նչ հատուկ քայլեր է ձեռնարկել (եթե այդպիսիք կան) Միացյալ Նահանգների կառավարությունը, ապահովելու համար Ռոյս-Էնգելի խաղաղության հաստատմանն ուղղված առաջարկները, մասնավորապես դիպլոմատների չտեղակայման, դիտորդների ավելացման եւ շփման գծի երկայնքով կրակոցների ուղղությունը ճշտող համակարգերի տեղադրման վերաբերյալ համաձայնության գալու առնչությամբ:

2) ԱՄՆ Պետդեպարտամենտը շատ համարձակ եւ բացահայտ էր, թե իր կարծիքով, հայկական կողմը ինչ զիջումների պետք է գնա: Արդյոք ԱՄՆ կառավարությունը պատրաստ է այս հանրային դիվանագիտությանը համապատասխան նույնքան բացահայտ եւ հստակ պահանջներ ներկայացնել Ադրբեջանին:

3) Որո՞նք են այն հատուկ փաստերը, իրավական փաստարկները եւ քաղաքական նկատառումները, որոնք հանգեցրել են մեր կառավարության կողմից Կոսովոյի, սակայն ոչ Լեռնային Ղարաբաղի, պաշտոնական ճանաչմանը:

4) Արդյոք Ադրբեջանի կառավարության ներքին հայաձայնների եւ կոռուպցիայի մասին տվյալները որեւէ կերպ ազդո՞ւմ են, թե ինչպես է մեր կառավարությունը նայում Ադրբեջանի ձգտմանը՝ տարածելու իր իշխանությունը Լեռնային Ղարաբաղի վրա:

5) Ինչո՞ւ Ադրբեջանի կողմից Ջուդայի միջնադարյան հայկական գերեզմանատան լիովին փաստագրված (եւ տեսանկարահանված) ոչնչացումը այդպես էլ երբեք չնշվեց Պետդեպարտամենտի Մարդու իրավունքների կամ կրոնական ազատության մասին զեկույցներում:

6) Ո՞րն է ԱՄՆ կառավարության ներկայիս պահանջը (եթե այդպիսին կա) ազատ արձակված եւ մինչ օրս չզոջացող կացնահարող մարդասպան Ռամիլ Սաֆարովին կրկին բանտարկելու վերաբերյալ:

7) Ո՞րն է ԱՄՆ քաղաքականությունը Ադրբեջանի կառավարության կողմից ԱՄՆ-ի հայկական ծագում ունեցող քաղաքացիների ճանապարհորդական սահմանափակումների վերաբերյալ:

8) Ինչպիսի՞ն է ԱՄՆ քաղաքականությունը ՆԱՏՕ-ի անդամ երկրների, հատկապես Թուրքիայի նկատմամբ, որը արդի հարձակողական զենքեր է վաճառում կամ փոխանցում Ադրբեջանին:

9) Ի՞նչ հատուկ սահմանափակումներ գոյություն ունեն ճանապարհորդության եւ կապի առնչությամբ Միացյալ Նահանգների քաղաքացիների եւ պաշտոնատար անձանց եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ: Ի՞նչ հիմնավորումներ կան այս ազատությունների որեւէ սահմանափակման համար: Որո՞նք են նման սահմանափակումների (եթե այդպիսիք կան) թվացյալ օգուտները:

10) Ձեր կարծիքով, ի՞նչ օգուտներ են հետապնդվում (եթե այդպիսիք կան) ԱՄՆ պաշտոնական հանրահայտ զսպվածությամբ՝ Ադրբեջանի բացահայտ հակահայկական ստորանքները, սպառնալիքները եւ միջասահմանային հարձակումները վիճարկելիս:

Կարծում են, որ լայն հնչեղություն ստացած առաջարկությունը կարող է 100 հազարից շատ ավելի ստորագրություն հավաքել Մայիտակ տան կայքում տեղադրման օրվանից 30 օրվա ընթացքում, հատկապես, եթե նշանավոր անձանց բազմաթիվ հետեւորդները նեցուկ կանգնեն այս առաջարկությանը:

*Թարգմանությունը՝ Ռուզաննա Ավագյանի*

## Լեւոն 1-ինի կիլիկյան ոսկյա մետաղադրամը վաճառվել է 40 հազար դոլարով



Կիլիկիո արքա Լեւոն Առաջինի (1198-1219թթ.) գահակալության ժամանակաշրջանին պատկանող հայկական ծայրաստիճան հազվագյուտ ոսկյա մետաղադրամն օկլայն աճուրդում վաճառվել է 40 հազար ԱՄՆ դոլարով: Այս մասին տեղեկացնում է Cngcoins.com կայքը:

Մետաղադրամի տրամագիծը 19.5 միլիմետր է, քաշը՝ 2.46 գրամ: Մետաղադրամի մի կողմում պատկերված է Լեւոն Առաջինը՝ առյուծի գահին բազմած, ձախ ձեռքին՝ ջրաշուշան, իսկ աջին՝ խաչ: Մետաղադրամի հակառակ կողմում հետեւի թաթերի վրա կանգնած երկու առյուծներ են՝ կաթողիկոսի խաչով:

Աճուրդի դրված մետաղադրամը ներկայացվել է Լոուրենս Ադամսի «Արարատյան հավաքածուից»: Լոտի մեկնարկային գինը 50 000 դոլար էր: Մետաղադրամը վաճառվել է նախորդ շաբաթ: Գնորդը հայտնի չէ:

## Կյանքից հեռացել է անվանի պետական գործիչ Խաժակ Դրամփյանը



Հունվարի 17-ին 93 տարեկան հասակում կյանքից հեռացել է ԽՍՀՄ անվանի պետական քաղաքական գործիչ, ՀԽՍՀ ավտոտրանսպորտի նախկին նախարար Խաժակ Անդրանիկի Դրամփյանը:

Խ. Ա. Դրամփյանը ծնվել է 1922 թ. դեկտեմբերի 23-ին, Արմավիրի մարզի Նալբանդյան (Նոր Շահրիար) գյուղը:

Լավ կրթություն ստանալու նպատակով նախ սովորում է Երեւանի Մշակույթի անվան միջնակարգ դպրոցում, ապա մինչև Հայրենական պատերազմի սկիզբը ավարտում Երեւանի պետական էլեկտրամեխանիկական տեխնիկումը: Պատերազմի առաջին իսկ օրերին Վրաստանում հատուկ դասընթաց անցնելուց հետո տասնիննամյա Խաժակին ուղարկում են Հյուսիսկովկասյան ճակատի 43-րդ հատուկ հրաձգային գունդ՝ որպես դասակի հրամանատարի տեղակալ: Մոզդոկի համար մղվող մարտում, 1942-ի դեկտեմբերին Դրամփյանը վիրավորվում է:

Չապաքինվող վերքով եւ ցրտահարված ոտքերով գրեթե մեկ տարի պառկելով նախ մերձճակատային հոսպիտալում, ապա՝ Բաքվի Արմենիկենտ թաղամասի զինվորական հիվանդանոցի վերածված հայկական դպրոցում, եւ հետագայում Երեւանի Թոխմախի հոսպիտալում՝ Դրամփյանը գորացրվում է 1943-ի վերջին՝ որպես ոչ պիտանի զինվորական ծառայության համար: 1951-1953թթ. Դրամփյանը երկրորդ անգամ է գորակոչվում Սովետական բանակի շարքերը՝ որպես պահեստային սպա՝ հատուկ առաջադրանքով՝ կապված բանակում նոր ստրատեգիական զենքի ձեռք բերման հետ:

Չինվորական ծառայությունից վերադառնալուց հետո Խ Ա. Դրամփյանը անցնում է կուսակցական աշխատանքի: Աշխատում է կուսակցության Լենինյան շրջկոմի տրանսպորտի ու արդյունաբերական բաժնում որպես բաժնի վարիչ, այնուհետեւ ուսման է անցնում Հայաստանի Կոմկուսի Կենտկոմին կից բարձրագույն պարտիական դպրոցում: Ուսումն ավարտելուց հետո 1957-1960 թթ աշխատում է ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի համակարգում՝ արդյունաբերության եւ տրանսպորտի բաժիններում, կուսակցական մարմիններում՝ որպես հրահանգիչ, այնուհետեւ՝ պատասխանատու կազմակերպիչ: Չթողնելով աշխատանքային գործունեությունը՝ 1955 թ. Խ. Դրամփյանը սովորում է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի երեկոյան բաժնում, որն ավարտելուց հետո էլ 1960 թ. ստանում է արդյունաբերության ոլորտում տնտեսագետի դիպլոմ: 1960թ. Խ.Ա.Դրամփյանը առաջադրվում է

պատասխանատու աշխատանքի՝ կուսակցության Իջևանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնի, որտեղ եւ աշխատում է ավելի քան չորս տարի:

1964թ. Խ. Դրամփյանը կրկին աշխատանքի է անցնում ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի ապարատում եւ մինչև 1967 թ. աշխատում այնտեղ որպես Կենտկոմի գործերի կառավարիչ: Սկսած 1967 թ. Խ. Դրամփյանը անցնում է տնտեսական աշխատանքի: Նշանակվում է ավտոտրանսպորտի նախարարի տեղակալ, որտեղ եւ աշխատում է մինչև 1971 թ.: 1971-ից մինչև 1978թ. աշխատում է որպես Գազիֆիկացիայի գլխավոր վարչության պետ:

Սկսած 1978 թ. Խ. Դրամփյանը ավելի քան 10 տարի աշխատում է հանրապետության ավտոտրանսպորտի նախարարի պաշտոնում: Դրամփյանի գործունեությունը ավտոտրանսպորտի նախարարի պաշտոնում կապված է լուրջ բարեփոխումների եւ հանրապետության ավտոտրանսպորտի զարգացման հետ: 70-ական թվականների վերջերին ավտոտրանսպորտը, հատկապես ուղեւորատար ծառայությունը գտնվում էին դժվարին իրադրության մեջ:

Համեմատաբար կարճ ժամանակահատվածում Խ. Դրամփյանին հաջողվեց արմատականորեն լուծել այդ խնդիրների մեծ մասը: Միայն 1980-1990-ական թթ. կառուցվեցին եւ վերակառուցվեցին ավելի քան 40

ավտոձեռնարկություններ, որոնց համար ծախսվեց ավելի քան 450 մլն ռուբլի կապիտալ ներդրում:

Թռչակի անցնելուց հետո՝ 1989 թվականի դեկտեմբերի 25-ին «Գիտելիք» գիտալուսավորչական հասարակական կազմակերպության վարչության հրամանով Խ. Դրամփյանը նշանակվում է գործերի կառավարչի պաշտոնին, իսկ 1990 թ.՝ տնտեսության եւ ֆինանսների հարցերով տնօրենի տեղակալ: Այդ պաշտոնում նա աշխատեց մինչեւ 2002 թվականը՝ շուրջ 12 տարի: 1991 թվականից մինչեւ 2002 թվականը աշխատել է նաեւ Հայկական բաց համալսարանում (ներկայիս՝ Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարան):

Հեղինակել է երկու գիրք՝ «Արարման բերկրանքը», (Երեւան, 2007 թ., 320 էջ) եւ «Մտորումներ անցյալի եւ ապագայի մասին» (Երեւան, ՎՄՎ-Պրինտ, 2010 թ., 500 էջ), ուր կիսվում է իր հուշերով, օգտակար խորհուրդներով ու բազմամյա փորձով:

Խ. Դրամփյանը բազմիցս ընտրվել է հանրապետության Գերագույն սովետի եւ Երեւանի քաղաքային սովետի դեպուտատ, ավելի քան 30 տարի անընդմեջ ընտրվել է Հայաստանի կոմկուսի բարձրագույն մարմինների շարքերում: Եղել է Կենտկոմի անդամ եւ անդամության թեկնածու, վերահսկիչ հանձնաժողովի անդամ: Նա ընտրվել է Սովետական Միության Կոմունիստական կուսակցության 22-րդ համագումարի պատգամավոր:

Երկու անգամ պարգևատրվել է հանրապետության Գերագույն սովետի պատվոգրով:

## Ախալքալաքը Նինոծմինդայի հետ միասին խորհրդարանում կունենա մեկ պատգամավոր, նախկին երկուսի փոխարեն



Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված նոր Ընտրական օրենսգրքի համաձայան Ախալքալաքը միավորվում է Նինոծմինդայի հետ, որտեղ երկու տարբեր շրջաններ խորհրդարանում ներկայացված կլինեն միայն մեկ մեծամասնական պատգամավորով նախկին երկուսի փոխարեն, հաղորդում է «Ջավախք մեդիան» հավելելով, որ այդ փոփոխություններով, տարբեր շրջաններ մեծամասնական ընտրատարածքով միացվում կան էլ հակառակը բաժանվում են իրարից:

Նշվում է, որ կարծիք կա, որ աղբրեջանաբնակ Մառնեուլի շրջանը հակառակը մեկը բաժանում երկու ընտրատարածք են դարձնում:

Այս ամենից ելնելով հստակ կարելի է ասել, որ տվյալ օրինագիծը հակաժողովրդավարական է եւ հիմնականում ոտնահարում է Ջավախքի հայ ազգաբնակչության

իրավունքները: Այս ամենից կարելի է նաեւ մի եզրակացություն անել եւս, որ Վրաստանի նոր իշխանություններն անտեսում են ԱՄՆ-ի պետքարտուղարության ամենամյա զեկույցը, որտեղ կոչ էր արվում Վրաստանին ավելացնել ազգային փոքրամասնությունների թիվը երկրի խորհրդարանում, ինչպես նաեւ Եվրոպական միության բոլոր խորհրդատվությունները, որոնք վերաբերվում են ազգային փոքրամասնություններին եւ տվյալ խնդրին: Նշենք, որ Վրաստանում ընտրական օրենսգիրքն ընդունվել է 2015 թվականի նոյեմբերին:

## Բաքվի հայության դեմ իրականացված կոտորածը մինչ օրս համարժեք գնահատական չի ստացել. ԼԳՀ ԱԺ



Բաքվի հայության դեմ իրականացված կոտորածը մինչ օրս համարժեք գնահատական չի ստացել: Այս մասին հայտարարություն է տարածել ԼԳՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը՝ Բաքվի հայ բնակչության զանգվածային ջարդերի 26-րդ տարեկիցի կապակցությամբ:

Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է. «1990թ. հունվարի 13-19-ը Բաքվում աղբրեջանական իշխանությունների կողմից կազմակերպվել ու իրականացվել է հայ բնակչության զանգվածային կոտորած: Միայն իր ազգային պատկանելության համար տեղի շուրջ քառորդ միլիոն հայությունը ենթարկվել է բռնությունների, կոտորածի ու տեղահանման, ինչի հետևանքով քաղաքն ամբողջությամբ հայաթափվել է: Թալանի ու բռնագրավման է ենթարկվել Բաքվի հազարավոր հայ բնակիչների անշարժ ու շարժական գույքը: Բռնություններին զոհ է գնացել ավելի քան 400 հայ, որի մասին վկայում են միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները:

Այդ օրերին Բաքվում տեղի ունեցած բռնությունները 1988թ. փետրվարին Մումզայիթում, իսկ այնուհետև՝ Աղբրեջանի հայաշատ այլ բնակավայրերում չղատապարտված ջարդերի շարունակությունն էին, որոնք իրականացվել են ԽՍՀՄ ղեկավարության ինստիտուտի եւ թողտվության պայմաններում ու Աղբրեջանի իշխանությունների կողմից պետական մակարդակով տարածվել նաեւ Լեռնային Ղարաբաղում:

Աղբրեջանի իշխանությունները ոչ միայն նենգափոխում են «սեւ հունվարի» էությունը, այլև լռության ու մոռացության են մատնում «երեք ջարդերի մայրաքաղաքի» պատմությունը՝ փորձելով կոծկել Բաքվում 1905թ., 1918թ. եւ 1990թ. կոտորածների ու աղբրեջանահայության հանդեպ



իրականացրած ցեղասպանության քաղաքականության ակնհայտ հետեւանքները:

Բաքվի հայության դեմ իրականացված սոսկալի կոտորածը մինչ օրս համարժեք գնահատական չի ստացել: Ավելին, վերջին քսանվեց տարիներին օգտվելով անպատժելիությունից՝ Ադրբեջանի ղեկավարությունը հետեւողականորեն իրականացնում է հայատյացության պետական քաղաքականություն, որն ուղեկցվում է զինադադարի պարբերաբար խախտումներով եւ պատերազմի վերսկսման սպառնալիքներով:

Հարգելով Բաքվի ջարդերին ու բռնատեղահանությանը զոհ գնացած անմեղ հայերի հիշատակը ու դատապարտելով այլատյացության, ծայրահեղականության եւ ահաբեկչության ցանկացած դրսևորում՝ ԼՂՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը.

վերահաստատում է, որ Բաքվի ջարդերը լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի 1948թ.

«Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ պատժելու մասին» կոնվենցիայով սահմանված ցեղասպանության հանցագործության իրավական ձեւակերպմանը,

պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը հետեւողական է լինելու, որպեսզի ադրբեջանահայության ցեղասպանությունը կազմակերպողներն ու իրականացնողները, համաձայն միջազգային նորմերի, ենթարկվեն պատասխանատվության,

կոչ է անում քաղաքակիրթ աշխարհին եւ խորհրդարանական կառույցներին՝ դատապարտել Բաքվի հայ բնակչության զանգվածային ջարդերը, դրանց տալ իրավական գնահատական:

## 2015-ին Հայաստանի զինված ուժերում եւ ԼՂՀ ՊԲ-ում գրանցվել է 57 մահ. Արժրուն Հովհաննիսյան



2015թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում եւ ԼՂՀ ՊԲ-ում գրանցվել է զինվորական ծառայություն անցնելու հետ կապված 57 մահ: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Արժրուն Հովհաննիսյանը:

«Հաշվի առնելով դաշտում հնչող տարատեսակ թվերը, երբեմն դրանց հանիրավի շահարկումը որոշեցինք ներկայացնել ՁՈՒ-երում 2015թ. գրանցված մահերը ըստ պատճառների: Տվյալները ամփոփված են հաշվի առնելով

նաեւ քննության գործընթացները, հստակ որակումները եւ այլն:

2015թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում եւ ԼՂՀ ՊԲ-ում գրանցվել է զինվորական ծառայություն անցնելու հետ կապված 57 մահ, որոնց հիմնական պատճառներն են՝ հակառակորդի կողմից շփման գծում սպանությունները (դիպուկահարների կրակոցներ, դիվերսիոն եւ այլ գործողություններ)՝ 38 մահ,

ավտովթար՝ 2,

հիվանդություն՝ 2,

սպանությունը՝ 1,

ինքնասպանություն եւ ինքնասպանության հասցնելու դեպքեր՝ 6,

դժբախտ պատահարներ՝ 4,

մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետեւանքով՝ 3,

սկանի պայթյուն՝ 1»,-գրել է նա:

## Տնտեսագետ. Հայաստանի թիվ մեկ ռազմավարական գործընկերը Ռուսաստանը չէ, այլ Իրանը



Հայաստանի թիվ մեկ ռազմավարական գործընկերը Ռուսաստանը չէ, այլ Իրանը: Այդ մասին հունվարի 20-ին «Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացման տնտեսական, քաղաքական եւ էներգետիկական հետեւանքները Հարավային Կովկասի վրա» թեմայով քննարկմանն ասել է Արտակ Մանուկյանը:

Նրա խոսքով, Լեռնային Ղարաբաղում հակամարտության առկայության պայմաններում Իրանը մեկն է այն սուբյեկտներից, որոնք իրականում շահագրգռված են ստատուս-քվոյի պահպանմամբ, որպեսզի Ադրբեջանին թույլ չտան հեշտ իրականացնել իր մտադրությունները:

«Երբ նավթի գներն ընկնում են, այդ ոլորտում խաղացողներն ու ներդրումները եւս կրճատվում են, ինչը սահմանափակում է այդ սպարանքի առաջարկը եւ բարձրացնում է զինը: Այո, Իրանը մտնում է նավթային շուկա, բայց շատ անբարենպաստ պայմաններում: Այստեղ ավելի շուտ պետք է տեսնել ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի հակամարտությունը Ռուսաստանի հետ, այսինքն հասկանալի է, որ դա նաեւ լրացուցիչ ճնշում է գործադրում Ռուսաստանի տնտեսության վրա», - նշել է Մանուկյանը՝ պարզաբանելով, որ Իրանն ու Ռուսաստանը որոշ ուղղություններով անմիջականորեն մրցակցում են իրար հետ:

## ԵՄԽՎ-ն մերժեց Ուոլթերի հակահայկական զեկույցը

ԵՄԽՎ-ում հունվարի 26-ին կայացել է բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի «Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի մյուս օկուպացված տարածքներում բռնության աճը» թեմայով զեկույցի քվեարկությունը: 66 պատգամավոր կողմ է քվեարկել զեկույցին, 70-ը՝ դեմ, 45-ն էլ ձեռնպահ են մնացել: Բանաձեռի նախագիծը մերժվել է: Հիշեցնենք, որ ԵՄԽՎ ձմեռային նստաշրջանում այսօր՝ հունվարի 26-ին, քննարկվում է բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի «Բռնության աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» եւ բոսնիացի պատգամավոր Միլիցա Մարկովիչի «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր գրկված են ջրից» զեկույցները: Եվրոպայի միավորված ձախերի, սոցիալիստների ու Եվրոպական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները դեմ են արտահայտվել հակահայկական զեկույցներին:

## ԵՄԽՎ-ն ընդունեց Մարկովիչի հակահայկական զեկույցը

ԵՄԽՎ-ում հունվարի 26-ին կայացել է բոսնիացի պատգամավոր Միլիցա Մարկովիչի «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր գրկված են ջրից» թեմայով հակահայկական զեկույցի քվեարկությունը: 98 պատգամավոր կողմ է քվեարկել զեկույցին, 71-ը՝ դեմ, 40-ն էլ ձեռնպահ են մնացել: Բանաձեռի նախագիծն ընդունվել է: Ավելի վաղ ԵՄԽՎ-ն քվեարկությամբ մերժել էր մյուս հակահայկական նախաձեռնության՝ բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի «Բռնության աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» թեմայով բանաձեռի նախագիծը: Եվրոպայի միավորված ձախերի, սոցիալիստների ու Եվրոպական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները դեմ են արտահայտվել հակահայկական զեկույցներին:

## Հայաստանցի 107 գիտնական դրամաշնորհ կտանա ՀՕՖ-ից



Հունվարի 27-ին 32 խմբում ընդգրկված հայաստանցի 107 գիտնականներ դրամաշնորհներ կտանան Հայ օգնության ֆոնդից՝ կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, կենսատեխնոլոգիայի, աստղագիտության եւ այլ ոլորտներում գիտական հետազոտություններ իրականացնելու համար: ՀՕՖ-ից հայտնում են, որ մրցույթին, որ իրականացվում է 2001 թվականից, այս տարի ներկայացված 244 գիտական հայտերից ԳԿՀԱՀ հետազոտական խորհուրդը հաղթող է ճանաչել 32-ը: Գիտական խմբերի ղեկավարներից 18-ը մինչև 35 տարեկան երիտասարդներ են, 13-ը՝ կանայք: Հաղթողներին ընտրում է ԱՄՆ-ում գործող

փորձագիտական հանձնախումբը: Դրամաշնորհի գումարը կազմում է 5000 դոլարին համարժեք դրամ: Ի լրումն ԳԿՀԱՀ-ի տրամադրած դրամաշնորհների, ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի եւ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի համագործակցության շնորհիվ այս տարի 5 դրամաշնորհ է տրամադրվել երիտասարդ գիտնականների ղեկավարությամբ գործող հետազոտական խմբերին: Այսպիսով՝ 2013-ին սկսված համագործակցության շնորհիվ տրամադրվող դրամաշնորհների թիվը դարձել է 12: Այս տարի դրամաշնորհներից 15-ը տրամադրվել է կյանքի մասին գիտությունների՝ կենսաբանության, կենսատեխնոլոգիայի, կենսաքիմիայի, 7-ը ֆիզիկայի, 3-ը աստղաֆիզիկայի, 1-ը քիմիայի, 1-ը բիոմեխանիկայի, 1-ը երկրի մասին գիտության, 1-ը գրականության, 1-ը պատմության, 1-ը հնագիտության, 1-ը տնտեսագիտության ոլորտներում հետազոտություններ իրականացնելու համար: Անցած 16 տարիների ընթացքում ԳԿՀԱՀ հետազոտական խորհրդին ներկայացվել են մոտ 2000 դիմում-առաջարկներ: Դրամաշնորհներ են ստացել 404 գիտական խմբեր, որոնցում ընդգրկված են եղել 1545 գիտնականներ: Ծրագրի դրամաշնորհային ընդհանուր գումարը կազմել է 2 մլն 20 հազար դոլար:

## Արևմտյան Հայաստան

### Թուրքիայի հերթական հայկական եկեղեցին է գանձագողերի պատճառով քանդվում



Թուրքիայի Երզնկայում 1800-ականներին կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին գանձ որոնողների գործողությունների հետևանքով վերածվել է ավերակների: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, երկար տարիներ բախտի քմահաճույքին մնացած եկեղեցին վերջին օրերին գանձ որոնողների այցելության վայր է դարձել: Մեծ վնասների ենթարկված շինության պահպանության ուղղված անվտանգության ոչ մի քայլ չի իրականացվել: Միայն ժանդարմերիայի կողմից եկեղեցու դռանը փակված է տեղադրվել: Գանձ որոնողների գործողությունների հետ կապված հետաքննություն չի սկսել: Երզնկայի Դեղիբնենքոյի բնակիչներից Թուրքա Գյուլուները կապ է հաստատել «Ակոս»-ի հետ եւ պատմել եկեղեցու վիճակի մասին:

Եկեղեցին օրակարգում հայտնվել էր հինգ տարի առաջ, երբ եկեղեցու սրբապատկերները գողացվել էին: Թողա Գյուլումը, ով գրադվում է եկեղեցու պահպանության հարցով, հայտնել է, որ եթե անվտանգության միջոցառումներ չիրականացվեն, ապա նույնը կրկնվելու է: Նա նշել է, թե վերջին շրջանում գանձ որոնողների հետաքրքրության կենտրոնում հայտնված եկեղեցու դռանը ժանդարմերի փական է դրել, սակայն սա գանձ որոնողներին չի վախեցնելու և արգելք չի հանդիսանալու: Նշվում է, որ քաղաքի կենտրոնից 15 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցին վերանորոգվելու էր Երզնկայի նահանգապետարանի կողմից: Սակայն նահանգապետի փոփոխությունից հետո դրան ուղղված ոչ մի քայլ չի իրականացվում: Հետազոտության ընթացքում պարզվել էր, որ եկեղեցու երկրորդ հարկում փյուզում կա, սակայն վերանորոգման աշխատանքներից հետո եկեղեցու ընդհանուր շինությունը կարող էր նախկին տեսքն ունենալ:

### Վանի Բերկրիի ջրվեժը հրաշք տեսք է ստացել նաև ձմռանը



Վերջին օրերին ցածր ջերմաստիճանի հետևանքով սառել է նաև Վանի Բերկրիի ջրվեժի մի մասը: Այս օրերին Բերկրիի ջրվեժ այցելող տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկները հիանում են ջրվեժի հրաշք տեսքով ու լուսանկարվում: Բերկրիի ջրվեժը (ներկայում անվանվում է Մուրադիյե) գտնվում է Բերկրի գետի վրա, որն իր հերթին սկիզբ է առնում Թոնդրակ լեռից, հոսում Վասպուրականի լեռներին գուգահեռ, անցնելով 65 կմ տարածություն եւ թափվում Վանա լիճը: Բերկրիի ջրվեժը գտնվում է Վան քաղաքից 90 կմ հեռավորության վրա:

### Թուրքիայում լույս է տեսել համաշխարհային «Գոր» ամսագրի երրորդ համարը



Թուրքիայում լույս է տեսել համաշխարհային «Գոր» ամսագրի երրորդ՝ «Աշուն» համարը: Այս մասին տեղեկանում ենք Akunq.net-ից: Աղբյուրի համաձայն՝ հանդեսի երրորդ համարում տեղ են գտել հայոց լեզվի՝ Համշենի բարբառի վերաբերյալ

լեզվաբանական ուսումնասիրություններ, ինչպես նաև՝ Համշենի մշակույթը ներկայացնող բազմաթիվ անեկդոտներ, բանաստեղծություններ և պատմվածքներ:


### Թուրքիայի մեջլիսում Կարո Փայլանը կոչ է արել դադարեցնել կողավորել հայերին



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը երկրի խորհրդարանում կոչ է արել դադարեցնել անձնագրերում կիրառել ազգային ու կրոնական պատկանելության մասին կոդերով նշումները:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ Կարո Փայլանը խորհրդարանում պատմել է, թե մանկուց մշտապես ենթարկվել է կրոնական խտրականության պետական մարմինների հետ շփումներում: «Փոքր տարիքից սկսած, երբ որևէ պետական կառույց էի գնում ու այնտեղ իմ նույնականացման քարտում տեսնում էին, որ քրիստոնյա եմ, սկսում էին խտրականություն ցուցաբերել», - ասել է Կարո Փայլանը՝ կոչ անելով իշխանություններին՝ դադարեցնել ազգային ու կրոնական պատկանելության նշումները անձնագրերում ու նույնականացման քարտերում:

### Թուրքիայում լույս է տեսել Քազըմ Գյունդողանի «Քահանայի թոռները. Դերսիմահայեր-1» գիրքը



Թուրքիայում «Իլեթիշիմ» հրատարակչությունը Քազըմ Գյունդողանի հեղինակությամբ լույս է ընծայել «Քահանայի թոռները. Դերսիմահայեր-1» գիրքը: Այս մասին տեղեկացնում է Akunq.net-ը: Աղբյուրի համաձայն՝ սույն գիրքը կազմված է 1937-38 թթ. Դերսիմի կոտորածներից ողջ մնացած վանքցի և զրմեքցի քրիստոնյա հայերի պատմություններից: Այդ տարիներին ռմբակոծվում և սպիրվում է 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո Դերսիմում կանգուն մնացած

Հավորիի Սուրբ Կարապետ վանքը: Գյուղի այեւիներն ու քահանայի տոհմը ոչնչացվում են, իսկ պատահականությամբ կոտորածից փրկված սակավաթիվ ընտանիքների անդամներն աքսորվում են Թուրքիայի տարբեր բնակավայրեր:

